600.0185.27.05.20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 մայիսի 2020 թվականի №185Ա

քաղ. Երևան

ՀՈՂՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՆԵՐԻՑ ԱՌԱՔՎՈՂ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՍԱԿԱԳՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետը և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2015 թվականի ապրիլի 22-ի №88Ն որոշումը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Սահմանել՝
   1) «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության «Լոռի-1» հողմային էլեկտրակայանից առաքվող էլեկտրական էներգիայի սակագինը՝ 43.811 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 52.573 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.
   2) «ԱՐԱՑ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Քաջարան» հողմային էլեկտրակայանից առաքվող էլեկտրական էներգիայի սակագինը՝ 43.811 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 52.573 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.
   3) «Էներգոտեխնիկա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Էներգոտեխնիկա-1» հողմային էլեկտրակայանից առաքվող էլեկտրական էներգիայի սակագինը՝43.811 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 52.573 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.
   4) «ԶՈԴ ՈՒԻՆԴ» փակ բաժնետիրական ընկերության «Զոդ Ուինդ» հողմային էլեկտրակայանից առաքվող էլեկտրական էներգիայի սակագինը՝ 43.811 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 52.573 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հուլիսի 1-ից և գործում է մինչև 2021 թվականի հուլիսի 1-ը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
27 մայիսի 2020թ.